



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«12» 03 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 060 - 25

Նախաձեռնող՝

Երևանի քաղաքապետարան
Քաղաք Երևան, Արգիշտի 1

Գործունեությունը՝

Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փողոց 4-րդ նրբանցք
12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցում
Քաղաք Երևան

Առդիր՝ 6 թերթ

ԲՓ № 060 - 25

« 12 » Մարտի 2025թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Երևանի քաղաքապետարան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային և այլ փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ հաշվետվություն/՝ նախատեսվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցում:

Կառուցապատման նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2024թ. ապրիլի 8-ի N01/18-01/167-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 23.50023 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակը թափառող կենդանիների կացարանի կառուցումն է՝ թափառող կենդանիների խնամք իրականացնելու նպատակով:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 վերադրման և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապահության գոտիներ և սանիտարական դասակարգում» նորմերի համաձայն՝ սահմանված է 50 մ սանիտարապաշտպանական գոտի, տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը պահպանվում է քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 1300 մ հեռավորության վրա:



Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1113 մ բարձրության վրա, գտնվում է տաք կլիմայական գոտում: Քամու միջին արագությունը կազմում է 1.9 մ/վ: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը կազմում է 291 մմ, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 61%:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում՝ հյուս-արևմտյան մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ՝ դեպի հարավ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 901.0- 901.6 մ սահմաններում:

Գործունեության տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 20 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում, բացակայում են: Տարածքը զուրկ է բուսականությունից:

Գործունեության տարածքը գտնվում է մոտակա շենք-շինություններից՝ 28-140 մ, ճանապարհից՝ 115 մ հեռավորության վրա: Տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են:

Տարածքին կից առկա են ինժեներական ենթակառուցվածքներ՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման համակարգեր:

Գործունեության ենթակա կառուցապատման տարածքը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 հասցեում՝ 23.50023 հա հողամասում: Նախատեսվող գործունեության հողամասը՝ շենք-շինություններով գոյություն ունեցող կառուցապատված տարածք է: Տարածքում գործում է թափառող կենդանիների կացարան:

Տարածքում առկա են հետևյալ շինությունները՝


- կաթսայատներ՝ 10.99 մ² և 42.55 մ²,
- շինություններ՝ 58.06 մ², 139.33 մ², 35.81 մ², 762.94 մ²,
- ջերմոցներ՝ 1056.73 մ², 4090.65 մ²,
- պարիսպ՝ 4.8 մ²,
- ինքնակամ շինություններ՝ 266.98 մ²:

Համաձայն նախագծման թույլտվության՝ նախատեսվում է կառուցել մեկ հարկանի շինություն, առավելագույն բարձրությունը հողամասի հատակագծային նիշից՝ մինչև 3.5 մ: Նախատեսվում է տարածքի աջ և ձախ կողմերում /զուգահեռ/ 15 ազատավանդակներ, որոնք իրենց հերթին բաժանվում են 3 ազատավանդակի: Կառուցապատման մակերեսը 1540 մ² է, հողատարածքի ընդհանուր երկարությունը՝ 135 մ, իսկ լայնությունը՝ 17 մ:

Բոլոր ազատավանդակներում նախատեսվում է ջրամատակարարման և կոյուղագծերի համակարգեր, մեծ ազատավանդակներում տեղադրվելու են արտաքին լուսավորության համակարգ: Տարածքի գլխավոր մուտքերի և ազատավանդակների մոտ տեղադրվելու են դարպասներ:

Կենդանիների կացարանում աշխատանքների ծավալը որոշվում է սահմանված կարգով հաստատված թափառող կենդանիների թվաքանակի կարգավորմամբ և ներառում է.

- կենդանու ընդունելություն՝ կացարան, փաստաթղթերի լրացում, գրանցում,
- առաջնային բժշկական զննում (անհրաժեշտության դեպքում՝ անասնաբուժական օգնություն),
- կարանտին,
- հիվանդ կենդանիների մեկուսացում,
- կանխարգելիչ միջոցառումների իրականացում (կարող է բնութագրագիտների դեմ, պատվաստում),



- ստերիլիզացում (անհրաժեշտության դեպքում),
- նույնականացման նշանի կիրառում,
- նոր տերերի որոնում, կենդանիների տեղափոխում:

Կացարանում կենդանիներին խնամելու աշխատանքի շրջանակը սահմանում է.

- բոլոր կենդանիների և նրանց խցիկների ամենօրյա զննում,
- կենդանիների ամենօրյա կերակրում,
- կենդանիների զբոսանք,
- կենդանիների մաքրում, պարբերական խնամք,
- վանդակների և տարածքների մեխանիկական մաքրում,
- կենդանիների կերակրամանների ամենօրյա լվացում և ախտահանում,
- տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ (առնվազն ամիսը մեկ անգամ),
- ախտահանում (այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների հայտնաբերման ժամանակ):

Նախագծով վարչական շենքի կառուցում չի նախատեսվում, քանի որ տարածքում գործում է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը, որը կազմակերպելու և իրականացնելու է կենդանիների պահման և խնամքի հետ կապված միջոցառումները:

Կենդանիների համար նախատեսված վանդակները մաքրվելու և լվացվելու են ամեն օր: Կեղտաջրերն ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որը միանալու է կոյուղու բակային ցանցին: Նշված հատվածներում պարբերաբար իրականացվելու են ախտահանման աշխատանքներ՝ համապատասխան մասնագետների ցուցումներով՝ նպատակ ունենալով պաշտպանել կենդանիներին հնարավոր վիրուսային հիվանդություններից: Հաշվի առնելով շների ուժեղ վարակվածությունը որդերով՝ առաջացած թափոնները հավաքվելու և տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված տարածք:

Նախագծով կացարանի ջրամատակարարման համակարգը սնվելու է տարածքում գոյություն ունեցող ցանցից՝ 50 մմ տրամագիծ ունեցող խողովակից:

Կենցաղային կոյուղու ցանցն ինքնահոս է: Համակարգը մոնտաժվելու է կոյուղու PVC 50 մմ և 110 մմ խողովակներով: Կեղտաջրերն ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որը միանալու է կոյուղու բակային ցանցին:

Անձրևատար կոյուղու ցանցը մոնտաժվելու է կոյուղու խողովակներից: Շենքի ներքին բակից անձրևաջրերի հեռացումն իրականացվելու է ջրընդունիչ հորերի միջոցով: Անձրևաջրերն ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որը միանալու է տարածքում գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են օրվա ցերեկային ժամերին:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, քար, փայտ, մետաղ, բարձրորակ սվաղ, բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է տարածքում առկա ջրագիծը, օգտվելու են տարածքում գործող սանհանգույցից: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի սանիվների լվացման համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 866.5 խմ/շին. ժամ:



Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոամբարձիչ, բետոնատար ինքնաթափ, էքսկավատոր և այլն:

Կառուցապատման աշխատանքների նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Հանվող հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և ավելցուկային մասը տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Տարածքում բուսահողը բացակայում է: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ այդ թվում ավազի, բետոնի, քարի և այլն մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով՝ 150 մ³ ծավալով, կենցաղային աղբ՝ 840 կգ, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 4.058 մ³, յուղերով աղտոտված ավազ՝ 20 մ³, յուղոտված լաթեր՝ 4 կգ, ներկեր՝ 3 կգ, կարծրացված սոսնձի թափոններ՝ 8 կգ:

Տարածքում քանդման աշխատանքներ չեն կատարվելու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում, ներբակային ճանապարհների կառուցում: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 6 ամիս:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կանոնադրական մարմիններին հայտարարելով,
- մեքենաների և տեխնիկայի լվացումն իրականացնելու շտաբային կազմակերպության կողմից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,



- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Փորձաքննության ներկայացված գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, մշակվել են ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կադաստրի կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում առարկություններ չեն եղել:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում պետք է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել



լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան